Հայկական գիտահետազոտական հանգույց
Armenian Research & Academic Repository

Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

This work is licensed under a Creative Commons Attribution-NonComercial 3.0 Unported (CC BY-NC 3.0) **license.**

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով

ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

Share — copy and redistribute the material in any medium or format

Adapt — remix, transform, and build upon the material

LGA
1377

1253

222

ՀԵՐՈՒՄՆ ԿԱՐՕՆԱՅ

ԳՆԱԼՈՅ ՍՐԲՈՅՆ ՊԵՏՐՈՍԻ

Ի ՀՌՈՎՄ

ԶՈՐ ԳՐԵԱԼ Է

Տ. Յովհան Գիպնակեան հանանոյ Մեր-
ղայեան Վանանդեցի, Բաղմարդեան Վար-
ժապետ Մեսրովպեան վարժարանի։

ՕՍԻՒՈՒՆԻՍ

Ի ՏՊԱՐԱՆԻ ԵՂԲՈՐՑ ՏԷՏԷԵԱՆ

Ընդդէմ Ամպարէանի, թիւ 50։

1853

Լեռ
1371

ՀԵՐԲՈՒՄՆ ԿԱՐԾԵԱՑ

ԳՆԱԼՈՑ ՍՐԲՈՅՆ ՊԵՏՐՈՍԻ

Ի ՀՌՈՎՄ

ԶՈՐԳՐԵԱԼԻ

Տ. Յովհան Գէրգնակեան Հանգանաց Մէրոպեան
Վանանդեցի, Բաղմարդեան Վարժապետ
Մեսրովպեան Վարժարանի։

642
28320-62

ՕԶՄԻՒՌՆԻՍ

Ի ՏՊԱՐԱՆԻ ԵՂԲԱՐՑ ՏԷՏԷԵԱՆ

1853

43710-Ч.Л.

28. 1374

1371-Co

9-

Աղրեւոտ ըստ ասելոյ Հռովմայեցւոց ։ Գնացեալ է յԵրուսաղեմ առաքեալն Պետրոս յառաքելութիւն Հռովմայեցւոց ։

Հաւանականագոյն իմն հաստատուն թեամբ ապացուցանել չէ յանմարթից ինչ , թէ սրբազանն Պետրոս իբրև գլխաւոր ոմն առաքեալ Հռովմայեցւոց չէ գնացեալ 'ի Հռովմ ։ Եւ ոչ հաստատուն թեամբ կարեն ցուցանել , որք ասեն թէ նա ինքն Պետրոս յետ համբարձմանն Քրիստոսի զ36 տարի եկաց 'ի մարմնի . և յետ քարոզութեանն 'ի Թլփատութեան և յայլսն՝ գնացեալ 'ի Հռովմ հիմնեաց զեկեղեցի . և զամս 24 և ամիսս 5 , և աւուրս 10 զիշխանութիւն պապութեան վարեալ՝ 'ի 66 ամի Տեառն 'ի Ներոնէ նահատակեցաւ ընդ սրբոյն Պօղոսի , և այլն ։

Նորագոյն իմն գուցէ բանս երևեսցի և բաղմաց և ս անհաճոյ 'ի լսել . որովհետ-

ոև կարծէք այսմ ներհական առ ամենե-
սին հասարակեալ տեսանի, և արք մեծա-
մեծք և սուրբք բանիւ և գրով զնոյն ա-
ւանդեն. մինչև յետսամիտ և յանդուգն
համարել, որ զներհական նորին հաստա-
տել գուն գործեսցէ։ Այլ սակայն 'ի բաց
արարեալ զնախնակալ պաշարումն՝ ընդ
առաքելական բանից տեսութիւն ուշադ-
քնութեամբ ճշդիւ անցանելոյ հաւաս-
տագոյն և ս 'ի վերայ հասանել կարեմք ի-
րացն ստուգութեան. և յայանի տեսա-
նեմք թէ ոչ եղև երբէք սրբոյն Պետրոսի
իբրև զյատուկ առաքեալ Հռովմայեցւոց
գնալ 'ի Հռովմ։ Եւ այսու՝ ոչ եթէ զնա-
խահարցն ինչ արդեօք զբանից յարգաւո-
րութիւն 'ի վայր արկանել գրութեանս
այսմիկ եդեալ եմք նպաստակ, և ոչ իսկ
անմարդի մտօք զլուսաւոր շաւիղ ճշմար-
տութեան խնուլ շատխօսութեամբ. և
մտահաճ ոպատճառաբանութեամբ զպա-
տիւ այլոց աղարտել զստուգապէս պարծ-
ելոցն յիւրեանց բարեդիպութիւնս։
Այլ որ ինչ առաքելականացն բանից յայտ-
նի կերպարանք ելցեն, բացերև պարզու-

թեամբ յանդիման ածել. գիտելով իսկ թէ չեղև ումեք 'ի մոի դնել զՃշդա-
գոյն զննութեամբն գալ 'ի մասին յայտ-
միկ. այլ միայն զգրեալն 'ի Թերթու-
լիանոսէ զառաջինն յետ 131 ամաց և յայ-
լոց ևս զկնի նորա պարզութեամբ հոդւոց
ընկալեալ նոցին վարեցան յամենայն բան
իւրեանց։ Անաւանդ իսկ չէին յայնժամ
պէտք Ճշդութեամբ 'ի խնդրակս մխելոյ.
զի զայժմեան հոգի չունէին նախագոյնքն
յեկեղեցական պէտս Հռովմայեցւոց. որ
970 ամաց հետէ գալով եկն և զօրացաւ
յաւուրց անտի հակառակութեան Փոտայ
և Իգնատիոսի պատրիարգացն Յունաց
և այսր։ Եւ Ջատագովքն ամենայն Ջա-
նիւք պաշտպանեցին և պաշտպանեն զնոյն.
և պարապումն իւրեանց յայն՝ անոտի պատ
Ճառաբանութեամբ ոչ 'ի յարդանս գըլ-
խաւորին առաքելոց սրբոյն Պետրոսի ու-
նի զգիտումն, այլ 'ի սնունդ մարմնամոլ
իւրեանց վէս գոռոզանաց որ ամենայն
փութով յիշխանասիրելն թևակոխէ. և
ամենեցուն լինել հրամանահան, չունե-
լով ինքեան զոք հաւասար. որ Աստուծոյ

է միայն, և ոչ ուժեք 'ի ստեղծականաց։
Այլ յայսպիսի երկուսն յառաջագա-
հութեան ըմբռնեալ ոգա ըստ աշխարհ-
ի խորհրդով, զի՞նչ այլ ինչ ծնան և ծը-
նանին, բայց եթէ զբազմապատիկ մոլար
աղանդոց վիժածս, որք գրաւեալ զբո-
վանդակ զայնոսիկ կողմանս, տարատահ-
ման յաշխարհէ անտի զանբիծ և զողջա-
միտ հաւատն վտարեցին։ Եւ զանմեղ
դառնեն և զոչխարս հօտին Քրիստոսի
զոյս խնամով յանձնեաց յարածուն սրբ-
բոյն Պետրոսի հովիւն ճշմարիտ, 'ի զոհ
մարմնաւոր իւրեանցն փառասիրութեան
անխիղճ և անողորմ սրտիւ աղաւոտեալ
վանեալ վարատեցին. և զմիամիտ ըզ-
գինս արեանն Քրիստոսի 'ի վարձ անօրէն
իւրեանց կամակորութեան վաճառա-
կուրս գերեցուցին։ Եւ ըստ նորուն իսկ
սրբազանին Պետրոսի նախագիրն գուշա-
կութեան (բ Պետր. բ. 3։) "Ագահու-
թեամբ մատցածին բանիւք առնեն (և
արարին) վտարանդի (զյատուկ ժողո-
վուրդս իւրեանց.) որոց դատաստանն 'ի
քնէ ոչ դատարկանայ, և կորուստն ոչ

ներհեացէ։ «Այլ մեք զայսոսիկ յանաչառ ընտրութիւն դատաստանին Աստուծոյ թողեալ՝որոյ է դատել և հատուցանել ըստ գրոյն, յառաջ եդեալս խնդրոյ բաց ցատրութիւն ճշմարտասէր հոգւովհանդիսացուք։

Արդ՝ յորժամ ուշի՛ ուշով յառաքելական գրութիւնան հայեացուք. ստուգիւ տանեմք թէ որբազանն Պետրոս բազում և սմաց ժամանակօք քան զոր համարին Հռովմայեցիք կացեալ էցէ՛ի կողմանս Պաղեստինու։ Զան զի այն ինչ՛ի դէպ եկն ժամանակն, յորում՝ որբազան առաքեալքն ունէին սփռիլ ընդ ազգս տիեզերաց ըստ պատուիրանին Քրիստոսի. յաջողեցաւ՛ի Հոգւոյն սրբոյ զի սուրբն Պետրոս՛ի մէջ թլփատութեան այսինքն է՛ի Հրէայս քարոզեացէ զԱւետարանն Քրիստոսի և զփրկագործ Տնօրէնութիւն նորա։ Եւ՝ յայս իսկ յինչանել Հոգւոյն սրբոյ յառաքեալսն՝ զառաջինն քարոզութիւնն Պետրոսի զերեք հազարան՛ի Հրէից աշակերտեաց. և դուռն եղև վիճակի նորա՛ի Հրէաստանի։ Ուստի և

ինքն Պետրոս յետ բազուս ամաց առ որ
'ի Հրէից էին հաւատացեալք իբրու 'ի
յատուկ իւր վիճակեալ զկաթուղիկէ իւր
հրահանգ խրատու ուղղորէր , հաստա-
տել զնոսա 'ի ճշմարտութիւն հաւատոյն ։
Օտոյն զայս յայտնի վկայէ սրբազանն
Պօղոս 'ի Գաղ . բ . 7 ։ " Այլ զի , ասէ
անդանօր , թէ յետ ամաց չորեքտասանից
միւսանգամ ելի Յերուսաղէմ և առան-
ձինն զբարոզութիւն աւետարանին ըզ-
գացուցի այնոցիկ , որք կարծեալ էին .
թէ ընդունայն ինչ ընթացեալ իցեմ կամ
ընթանայցեմ 'ի նմին առ հեթանոս . և
կարծեալքն՝ որք են Յակոբոս՝ Կեփաս և
Յովհաննէս այնպիսի ինչ ոչ զգացուցին
ինձ . այլ զնորին հակառակն . իբրև տե-
սին թէ հաւատացեալ է ինձ աւետա-
րանն անթլփատութեան , որպէս Պետ-
րոսի 'ի թլփատութեան ։ Եւ թէ ուս-
տի՞ արդեօք իցէ հաւատացեալ , աւասիկ
ասէ առ նմին . " Օ՛ր որ յաջողեացն Պետ-
րոսի՝ (Հոգին սուրբ) յառաքելութիւն
թլփատութեան , յաջողեաց և ինձ 'ի հե-
թանոս ։" Ուստի և որք 'ի շնորհաց Հո-

գեղոյն զօրացեալք, զամենայն զմարդկեղ-
ղէն կարծիս առ ոտն հարեալ էին վար-
դապետքն ճշմարտութեան, իսկոյն հա-
ւանական հաճութիւն մատուցեալ ընտ-
րութեամբ և յաջողման Հոգւոյն Սուրբ.
ըստ որում և պարտաւորք իսկ էին. յայն
միտս հաստատեցան, զի նոքա 'ի թլփա-
տութեան լինիցին քարոզք, և սուրբն
Պօղոս՝ 'ի հեթանոսս. որպէս և ասէ ան-
դանօր. "Իբրև գիտացին զշնորհսն, որ
տուեալ են ինձ, Յակոբոս և Կեփաս և
Յովհաննէս, որք կարծեալ սիւնքն էին,
ձեռն եառուն հաւանութեան ինձ և
Բառնաբայ. զի մեք՝ 'ի հեթանոսս. և
նոքա՝ 'ի թլփատութեան. բայց միայն
զի զաղքատսն (այսինքն է զառ 'ի Հրէ-
իցն զհաւատացեալսն, որ Յերուսաղէմ
բնակէին, և որովք արդեանցն առ 'ի
հեթանոսաց հաւատացելոցն զդարման
կենացն պաճարէին.) յիշեսցուք. զոր
և ես փութացայ զնոյն առնել։"

Եւ սովին պատճառաւ գտանեմք ա-
ւասիկ 'ի պրակս առաքելոցն զ31՝ կամ
ըստ այլ ստուգագոյն հաշուի՝ զ34 ան-

Յետ համբարձմանն Քրիստոսի Տեառն մերոյ դեգերիլ սրբազանին Պետրոսի 'ի կողմանս Հրէաստանի և Անտիոք։ Ուր կացեալ զամս եօթն վարեաց զիշխանութիւն արքեպիսկոպոսութեան. թէպէտ և յառաջ քան զդնալն նորա Անտիոք՝ որ եղև յետ ժողովոյ առաքելոցն, էին անդաւնօր հաւատացեալք. և քրիստոնեայ անունն հաստատեալ էր զառաջինն 'ի վերայ հաւատացելոց։ Այսն զի ցրուեալքն 'ի նեղութենէն՝ որ եղև 'ի վերայ Ստեփաննոսի և անդր հասին, և զբազումս աշակերտեցին։ Որ լուեալ եկեղեցին՝ որ Յերուսաղէմ, առաքեն անդ զԲառնաբաս՝ և նա հասեալ անդր և ուրախութեամբ լի եղեալ եկանէ 'ի Տարսոն 'ի խնդիր Պօղոսի, և գտեալ ածէ Անտիոք ուր զամն ողջոյն ժողովեալ զեկեցին և ուսուցեալ՝ քրիստոնեայ անուանեն զաշակերտեալսն։ Ընդ մարգարէանայ Ագաբոս զհամաշխարհական սովն. և ասի առաքեն զսէտս եղբարցն Հրէաստանի 'ի ձեռն Բառնաբայ և Սողոսի։ Յետ այնորիկ ձեռն արկանէ Հերովդէս

չարչարել զոմանս յեկեղեցւոյն ; և զեղբայրն Յովհաննու զՅակովբոս սրով ոսպանանէ : Եւ 'ի տեսանելն՝ թէ հաճոյ է Հրէից մահ և չարչարանք առաքելոցն , յաւելու ունել և զՊետրոս և դնել 'ի բանտի յաւուրս բաղարջակերաց . և Պետրոս հրեշտակիւ ղերծեալ 'ի բանտէն՝ խոյս տայ գնալ յայլ տեղի , որ համարի կողմն Փիլիպպեայ Կեսարեայ : (Գործ . ԺԲ . 19 :)

Երդ 'ի ժամանակին՝ յորում զայսպիսի նահատակութիւնս առաքինանայր սրբոյն Պետրոս , ասեն Հռովմայեցիք դնել զաթոռ իւր 'ի Հռոմ : Եւ սակայն քաջայայտ է , զի ցայնժամ չէր մեկնեալ երանելին 'ի կողմանցն Պաղեստինացւոց . այլ իբրև զյաւուրս առաքելոյ թլփատութեան յայնոսիկ կողմանս շրջեալ աւետարանէր : Եւ որպէս 'ի կարգէ բանին մարթ է իմաստասիրել , 'ի կողմանցն Անդիոքոսի՝ ուր սուրբն Մարկոս աւետարանիչ քարոզեաց Անդիոքոս , Աղեքսանդրիա և 'ի Թեբայիդ , հաստատեաց զեկեղեցիս , և ձեռնադրեաց

քահանայս, գրել սրբոյն Պետրոսի զթուղթն կաթուղիկեայց առ որ 'ի Հռէից հաւատացեալս. զի անշարժ արմատացին 'ի հաւատս. և մի՛ վասն նժդեհական նեղութեանցն երբէք դողդողեսցին։ Եւ զայս ստուգէ մեզ ողջոյնն, զոր ընդ իւրում ողջունի լծորդեալ՝ տայ նոցա 'ի դիմաց եկեղեցւոյն և սրբոյն Մարկոսի, յաստեղն (ա Պետ. 13.) "Ողջոյն տայ ձեզ, որ 'ի Բաբելոն ընտրելակից եկեղեցին է և Մարկոս որդի իմ։" Օ՛ եկեղեցին ըստ հիմնեալն 'ի Մարկոսէ ընտրելակից անուանէ. վասն զի Մարկոս չէր յերկոտասանից։ Յորոց հիմնաւորեալքն ընտրեալ անուանէին. և զԵգիպտոս՝ Բաբելոն, վասն բազմաբնակութեան աղգաց 'ի նմա խառնելոց։

Յայս միտ՝ որք 'ի Հռովմէ ասեն զայն թուղթ գրեալ սրբոյն Պետրոսի, ո՛չ մեծ ինչ ընծայեն Հռովմայ ըստ չափու պարծանացն Հռովմայեցւոց. զի դ.ընեն զեկեղեցի նոցա հիմնեալ ո՛չ յընտրելոց այլ յընտրելակցաց՝ յաշակերտացն առ.աքելոց։ Եւ մի՛ պատրեսցէ ըզնոսա կոչումն Բաբելոն։ զի սովոր են գիրք

յայլ և յայլ դէմս ըստ պատշաճի զան-
ուանցն բերել զյորջորջումն։ Որպէս ա-
հաւասիկ ասա զանուն Ռաբիելն առնու
սրբազանն Պետրոս ՝փոխանակ Եգիպտոսի
վասն բազմադիմի խառնաձայն լեզուաց
անդանօր եղելոց։ Եւ սուրբն Յովհան-
նէս 'ի Յայտ. ժէ. 5. խորհրդով առ-
նու փոխանակ Հռովմայ յաղագս որ 'ի
նմին գարշելի և անմաքուր պոռնկու-
թեանն 'ի կուռս, և վասն այլոց աղտե-
ղի խառնակութեանցն, զոր կռապաշ-
տութիւնն սնուցանէր յոչ վայելեալսն
յերկնաւորս շնորհացն նորոյս։ Եւ 'ի նը-
մին իսկ Յայտ. ժա. 8. զԵրուսաղէմ
քաղաքն կոչէ ըստ Հոգւոյն Սոդոմ և Ե-
գիպտոս, վասն արտաքոյ կարգի ամբա-
րշտութեան նոցա 'ի Փրկիչն եկեալ։

Այլ 'ի բաց թողեալ մեր զայսպի-
սեացն քննութիւն՝ եկեսցուք և յայլ
ցուցմունս, զոր թուղթքն սրբազանին Պօ-
ղոսի՝ մեզ առաջի բերեն։ Զոյն ինքն սրբ-
բազանն Պօղոս իրաղէկ լեալ հակառա-
կութեանն, որ 'ի մէջ հաւատացելոցն 'ի
Հրէից և 'ի հեթանոսաց, անդէն առ

նմին փոյթ յանձին բերէ սքանչելի վարդապետութեամբ 'ի միաբանութիւն քրիստոնէական բարեմտութեան ածել։ և զերկոցունց կողմանց զպարծանս 'ի նախահարան ունայնս դեբևեցուցեալ՝ գրէ առ նոսա թուղթ 'ի Ամենայ յամի Տեառն 59, որպէս համարին, և մեղմացուցանէ զդահապետութեան կուիւն յեկեղեցւոջ։ Օ՜ի՞ է զի որբազանն Պետրոս՝ զոր համարին յատուկ առաքեալ Հռովմայեցւոց, թէ և յայլ կողմանս էր յայնժամ, չտանի բնաւ փոյթ խաղաղել զվէճն։ Հիմ արդեօք թողու ընդ նոսա յընդունայն վիճմունս տագնապիլ։ Եւ նոքին իսկ Հռովմայեցիք էր աղագաւ չազդեն ինչ նմա զեկեղեցւոյ իւրեանց զտագնապ խռովութեան։ Անիթէ լքեալ էր և 'ի բաց թողեալ զնոսա զընալ ըստ կամաց իւրեանց։ և ուր մընայր արդեամբք յարդաւորութիւն պատուիրանի իւրումն վարդապետի, թէ Ընթացեա՛ զդառինս, արացեա՛ զոչխարս իմ։ Եւ որ ինքն այլոց առաջնորդաց աղաչելով օրինադրէր Ընթացեք՝ ասելով՝ որ 'ի

ձեզ հոտդ է Աստուծոյ, զառանցանէր
ինչ արդեօք 'ի նմին. օ՛ն անդր 'ի բա՛ց
տար։ Այլ զինչ. այն ոտուգի հաւաս-
տեաւ, թէ սրբազանն Պետրոս չէր յայ-
նոսիկ կողմանս. և ոչ իսկ յառաքելուն
Հռովմայեցւոց որոշեալ երբեք։ Այն
զի եթէ էր յիրաւի, պարտ և պատշաճ
էր նմա զպաշտօն իւր փառաւոր առնել
զամենայն ջանս յանձին բերելով՝ առ
'ի միասիրտ սիրոյ յօդաւորուն զերկոսին
կողմանս միաւորել. որպէս և սրբա-
զանն Պօղոս առնէ աւասիկ. և ըստ վա-
յելչուն և ս 'ի նոյն պարծի, անհպարտ
հոգւով գրեալ առ նոսա։ (Հռովմ. ժա.
13։) "Այլ ձեզ ասեմ հեթանոսաց։
ասէ. ցորչափ ժամանակս իցեմ հեթա-
նոսաց առաքեալ, զպաշտօնն իմ փա-
ռաւոր առնեմ"։

Այլ ահա այս իսկ է պատճառ. զի 'ի
գրել սրբոյն Պօղոսի զքարոզութիւն իւր առ
Հռովմայեցիս, զամենայն անդր եղեալ
զերևելիսն յանուանէ յիշէ 'ի յողջոյնսն,
և ոչ դնէ երբեք 'ի յիշատակութեան զա-
նուն Պետրոսի սրբազան առաքելոյն։

Եւ կարկատեսցեն մի բնաւ, թէ գիտէր որբազանն Պօղոս, զի որբազանն Պետրոս չէ 'ի Հռովմ անդր, այլ 'ի քարոզութի 'ի կողմանս նորին, վասն այնորիկ չյիշէ զանուն նորա 'ի մէջ ողջունիցն. զի չզօրէ 'ի հաստատուն ձկնայինդ այդ սողոսկութիւն։ Զանգի թէպէտ և յայլ կողմանս 'ի քարոզուի դեղերէր, 'ի լսել իւրում զերկպառակուի իւրոյ ժողովրդեան, չէր արդեօք մնաւանդ պարտաւորութիւն յաւէտ քան զամենեսին կանխել 'ի դարման փութալ և ոչ թողուլ բնաւ և ոչ փոքու վայրկենիւ մուտս դառանել դահասիրութե ախտին 'ի մատաղատի յայն հասարակուի, որ մեծագոյն իմն խոչ էր իւրումն ջանի. և իբրև զքաղցկեղ համաճարակ փոյթ ընդ փոյթ վաղս արձակէր յամենայն կողմանս 'ի նոյն համակել յախտաւորութի, որ աղարտիչն էր խոնարհութե Յիսուսի։ Զանգի յառաջադէմ, և պատուաւոր ոմանք էին Հռովմայեցիք, ընդաբոյս իմն և զոգին ունելով իշխելոյ 'ի վերայ ամենայնի 'ի հիմնադրութենէ անտի Հռովմայ և այսր. որ

թերևս կամ ընդ աշխարհի առցէ զվախ-
ճան, և կամ յանեզրափակ յաւիտենին
նովին ոգւով գահասիրեալ՝ զերկոսին
իսկ զօթարանս՝ զագոյն ասեմ և զբերկ-
րութեանն ցցէ աղմկաւ և 'ի հեծուկս
անկանելով։

Գոյ ասասանօր և զայս ինչ ածել զմտաւ.
զի սրբազանն Պօղոս կապեալ վասն Քրիս-
տոսի 'ի Հռոմ առաքի, և լուեալ եղ-
բարցն՝ ընդ առաջ ելանեն ցՈրդոստոսն
Ապիեայ և երիցն կրպակաց. զոր տե-
սեալ Պօղոս՝ ուրախանայ և քաջալերի։
(Գործ. իբ. 15։) Այլ 'ի մտանելն իւր 'ի
Հռոմ, առանձին լինել հրամայի նմա
հանդերձ զինուորաւ պահպանաւ իւրով.
և զամս 2 իւրովն վարձու եղեալ անդա-
նօր՝ անխափան ամենայն համարձակու-
թեամբ զարքայութեն Աստուծոյ քարոզէ
աւետարանեալ զՅիսուս Քրիստոս, որոց
պատահէին։ Արդ՝ այս ամենայն լինի
և յաջողի 'ի ձեռն քարոզութեանն սրբազանին
Պօղոսի. և յինչ պատճառս ընթերցումք
ուրեք, թէ անդ 'ի Հռոմ այս ինչ
գործ ընկերակից եղև սրբոյն Պօղոսի սըր-

28320-62
1642
ГОСУДАРСТВЕННАЯ ПУБЛИЧНАЯ БИБЛИОТЕКА
Ա. ԱՄ. Զ. ՄՅԱՍՆԻԿՅԱՆ

բաղանն Պետրոս ; կամ թէ իբրև զյա-
տուկ առաքեալ Հռոմայեցւոց , յայս
և յայն գործս խորհուրդ ետ Պողոսի զի
այնու վարեսցի 'ի բարիս վիճակի իւրում ,
և կամ եղբայրսիրաբար հոգացաւ ինչ
զՊողոսէ , որ կապեալ առաքեալ էր անդր
իբրու դատելի և այլն ։ Զի ուր յառա-
ջին գլուխն պրակաց առաքելոց ասէպ
ասէպ յիշատակի անուն սրբոյն Պետրոսի
մինչև 'ի ԺԵ · գլուխն , յետ այնորիկ չլի-
նի յիշատակ 'ի Գործս առաքելոց ։ Այլ
միայն ինքն Պողոս յիշատակէ յետ ժողովոյ
առաքելոցն եկեալ Յանտիոք (Գաղ · բ · 11 ։)
ուր նստիլ ասի զամս եօթն , և հիմն ե-
կեղեցւոյ դնել անդանօր և այլն ։

Յետ այնորիկ յատեան կայսեր Ներոնի
գայ սուրբն Պողոս ընդ անձին առնել
պատասխանի , և ոչ գտանէ յումեքէ
նպաստ թիկնապահուե , այլ ինքնին մի-
այնակ ըստ աստուածատուրն շնորհաց 'ի
ջատագովութիւն իւր առենաբանեալ
յարեւծուն ձեռաց զերծանի ։ Որպէս
և գրէ · (բ Տիմ · դ · 16 ։) " Յառաջնում
Վարագի ոչ ոք 'ի թիկունս եկաց ինձ ;

այլ ամենեքին թողին զիս. մի համարեցի նոցա այն։ Այլ Տէր օգնեաց ինձ։ և զօրացոյց զիս, զի ինև քարոզութիւնն հաստատեսցի, և լուիցեն ամենայն հեթանոսք. և ապրեցայ ես 'ի բերանոյ առիւծուն» այսինքն է Ներոնի։

Արդ զինչ գոյ կարծել մեզ յաղագս այսր. անդ էր սուրբն Պետրոս, և ձեռնթափ ինչ եկաց 'ի Պողոսէ, չազդեաց ինչ արդեօք 'ի նա յիշատակարան անխաբ դասուսուրին, թէ Ի Բանտի էի և եկի։ ասա իս։ Չցաւեաց ինչ նմա վասն յատեան գազանին մատնելոյն։ Յանդգնայս ցուցաւ խնամոտ աղեաք սրբոյն Պետրոսի յօգնուել բերիլ իւրումն պաշտօնակցի. և ոչ բընաւ, գթածն Պետրոս չառնու զայդ յանձն, ինքնայօժար է նա 'ի կարիս ամենեցուն լինել կարեկից։

Այլ չէր 'ի դէպ նմա (ասասցեն դուցէ) և անպատուղ ինչ յողն կանգնիլ 'ի նպատաստ Պողոսի։ Ո՛ւր լեր ո՛վ դու՝ որ զայդ բարբաւիս, զի ընդ յանիրաւս տրտնջողացն դատաստանաք զիրաւասէրն արկանես Պողոս։ Եթէ անպատեհ էր, յոր սակս

ապա իբրև զհեղգացելոց ոմանց գանգա-
տելս արձանագրէր յաշխարհէ յաշխարհ։
Պատանէր ապա իբրու վասն զառանցելոց
և ստգտելոց յեղբայրսիրութեան մասին
առ Ստուած աղերս յարդարէր զհամա-
բիլ նոցա զայն 'ի յանցանս։ Այ՝ եթէ չէր
նմա ակնկալութիւն պարզոյ թիկնապա-
հութեան նոցա, չցաւէր ինչ նմա երբեք,
և չգրէր գանգատ ինչ զնոցանէ։

Սրբազանն Պօղոս անտի 'ի Հռովմայ զա-
ռաքելական թուղթս գրեաց առ Դաղա-
տացիս, առ Փիլիպպեցիս, առ Կողոսա-
ցիս, առ Փիլիմոն, և առ Տիմոթէոս, և
յամ 'ի նոսա առաքէ ողջոյն յանուա-
նէ 'ի Հռովմ եղելոց, իսկ զանուն սրբ-
բազանին Պետրոսի չգրէրէ 'ի յիշումն բը-
նաւին յայնոսիկ. և զինչ և ս յայտնի ցոյց
չլինելոյ անդր սրբոյն Պետրոսի. վասն զի
եթէ անդ էր, կամ որոշեալ յառաքե-
լութիւն կողմանցն այնոցիկ, անշուշտ
գրէր 'ի յիշումն պատճառաւ իւիք։

Նիկեսցուք և յայլ հաւաստիս, զորս
մարթ է հաւաքել 'ի թղթոցն սրբոյն
Պօղոսի առ Դաղատացիսն։ Բայց զայս

նախ յուշ առնել 'ի դէպ է, զի ոմանք ասեն թէ յետ համբարձմանն Քրիստոսի մի անցեալ՝ քարկոծեցաւ սուրբն Ստեփաննոս. և ամաւ միով յետոյ քան զնա հատակուելն նորա հաւատաց սուրբն Պօղոս. որով երկու ամօք յետոյ քան զհամբարձումն հաշուեն զժամանակ դարձմանն Պօղոսի։ Այլ սակայն Ովիդիոս յաջորդն Պետրոսի Յնախօք յիւրումն ժամանակագրութեան ըստ լատինացւոց իսկ՝ եօթն ամօք յետոյ քան զհամբարձումն դնէ զքարկոծումն Ստեփաննոսի, որպէս և ընդարձակութիւն իրացն զնոյն պահանջէ. վասն որոյ և մեք զնոյն հաշիւ առնումք ասասանօր. թէպէտ և զառաջինն ևս առեալ չմնասեմք ինչ դրութեամբ. ըստ որում կան ևս միջոցք ժամանակի յորում Բառնաբաս և Պօղոս որոշեցան 'ի Հոգւոյն 'ի գործ քարոզութեան 'ի բաղում տեղիս, զորս չեղաք 'ի հաշիւ.

Այդ՝ եօթն ամօք յետոյ քան զհամբարձումն Քրիստոսի քարկոծի սուրբն Ստեփաննոս, որոյ սպանմանն կամակից էր սուրբն Պօղոս. որ և յետ այնորիկ տա-

կաւին 'ի Ֆենասակարուի եկեղեցւոյ փոյթ
'ի մէջ առեալ զժամանակ ինչ՝ ըստ թէ են
'ի Դամասկոս քրիստոնէիցն ժողովուրդք.
և առ ջերմեռանդ նախանձախնդիր հայ-
րենի օրինացն լինելոյ՝ թղթով քահանա-
յապետիցն դիմէ 'ի Դամասկոս, ածել
և անտի կապեալս յԵրուսաղէմ. և զճա-
նապարհային յոյսն ուրեմամբն Յիսուսի
զգաստացեալ՝ հաւատայ 'ի Քրիստոս.
և մկրտեալ անդէն առ նմին սկսանի
քարոզել 'ի Դամասկոս և Անբաբիա զամ
երիս։ Յետ այնորիկ ապա երանէ Երու-
սաղէմ տեսանել զՊետրոս և լինի առ
նմա զաւուրս հնգետասան. որպէս և
պատմէ նա ինքն (Գաղ. ա. 18։) Եւ ապա
դարձ արարեալ 'ի կողմանս Սորուց և
Կիլիկեցւոց՝ ելի 'ի քարոզուն Աւետա-
րանին. և յետ ամաց չորեքտասանից
միւսանգամ երանէ Երուսաղէմ ընդ
Բառնաբայ, առեալ ընդ իւր և զՏի-
տոս, և զացուցանէ անդանօր Յակով-
բու Կեփայի և Յովհաննու զքարոզուն
իւր 'ի հեթանոսս. զի 'ի կարծիս էին
վասն Պօղոսի, թէ ընդունայն ինչ ելցէ

ընթացեալ 'ի նմին։ Եւ անտի դառնայ վերատին Անտիոք և յայլ ևս կողմանս ըստ որոշման Հոգւոյն, և քարոզէ ոչ սակաւ ինչ ժամանակս. որպէս յայտ է։ (Գործ. ԺԳ. 2, և ԺԴ. 27։)

Յայտնիկ աւուրս ինչանեն ոմանք 'ի Հրէաստանէ, և ուսուցանեն նորահաւատ քրիստոնէիցն 'ի հեթանոսաց ըն-թլփատուել, ընդդէմ որոց բազմագոյն բանիւք վիճմունս արարեալ Պօղոս և Բառնաբաս, հուսկ յետոյ որոշեն ելանել Երուսաղէմ 'ի սահմանել զինդիրն։ Այր ազգաւ և ժողով գումարի առաքելոցն յորում կայր և սրբազանն Պետրոս, և լուծանեն զվէճն ըստ իրաւանց։ Այս առաքի սրբազանն Պետրոս Անտիոքայ առաքելուի, և վարէ անդ զեօթնամեայ իշխանութիւնն. ուր և ոչ ուղիղ գնալով 'ի ձշմարտութի Աւետարանին՝ յանդիմանի 'ի սրբոյն Պօղոսէ։ (Գաղ. Բ. 11։)

Ընդ՝ յետ ութն ամի 'ի համբարձման
նէն Քրիստոսի հաւատաց Պօղոս . . 8
Յետ երից ամաց եկանէ Ա-
ռուսաղէմ տեսանել զՊետրոս . . 3
Դարձեալ յետ ամաց չորեք-
տասանից եկանէ Ա՛ռուսաղէմ . . 14
Յետ ժողովոյ առաքելոցն
սուրբն Պետրոս վարէ Ա՛ն-
տիոք զիշխանութիւն ամս 7
32

Գոյ թէպէտ և միջոց բազում ժամա-
նակաց ընդ մէջ աւուրցն, յորս որոշե-
ցան Պօղոս և Բառնաբաս 'ի Հոգւոյն
առ գործ, յոր կոչեցան մինչև 'ի ժողովն
առաքելոց, այլ 'ի հաշիւ ոչ արկաք,
այլ թողաք զի եթէ ոք ոչ ընկալցի զ8
ամաւ յետոյքան զհամբարձումն զդարձն
Պօղոսի առաքելոյ, զոր ասէ յաջորդն
զկնի Պետրոսի Ա՛նտիոք Ովիդիոս, այն
ժամանակք ընդ այնր համարեսցին։ Ուս-
տի և ստուգիւ տեսանէ ամենայն ոք՝ թէ
մինչև 'ի վաթսուն և 'ի հինգ ամն Տեառն
մերոյ չէր տակաւին սրբազանն Պետրոս

գնացեալ 'ի Հռոմ, այլ 'ի կողմանս Պաղեստինացւոց և Անտիոքայ ազգէր 'ի քարոզութիւն ըստ առաքելական բանից վկայութեան։

Իսկ թէ յումմէ՞ արդեօք զառաջինն քարոզեցաւ 'ի Հռոմ քրիստոնէութի, մեզ 'ի քննին մտանել չէ 'ի դէպ, մեք զայս միայն իմանամք յառաքելական գրուածոցն, թէ սրբազանն Պետրոս իբրև զյաւուկ առաքեալ չգնաց 'ի Հռոմ. և նախ քան զՀռոմ՝ հիմնադիր եկեղեցւոյ եկաց Անտիոք. ըստ որում և յաջողուած քարոզութեան նորա 'ի թլփատութեան էր։ Օ՛ի թէպէտ և ընդ այլ առաքելոցն ունէր զպատուէր 'ի Տեառնէ աշակերտել զամ հեթանոսս, և ուսուցանել նոցա զպահպանութիւն սո 'ի Քրիստոսէ պատուիրելոցն, բայց յաւուկ վիճակ քարոզութեան նորա ուրոշեցաւ 'ի թլփատութեան։ Եւ յայս իսկ՝ յորժամ պէտք եղեն սպասաւորութեան նորա յաշակերտել զՊուռնելիոս հարիւրապետն 'ի կողմանս Հրէաստանի, մանաւանդ իմն ազգեցութեամբ Հոգւոյն

որբոյ հրամայեցաւ գնալ և մի՛ ինչ խըղ-
ձել։ Օ՛ի առաքեալ գոլով թլփատու�՝
այսինքն Հրէից, խղճէր մնանել առ-
արս անթլփատս ըստ Հրէից սովորու-
թեան. որով ընտելացուցանէր զանձն՝
նոցա, որպէս և ընդ խիղճ հարան մեր-
ձենալ առ նա որք՝ ի թլփատութենէ
հաւատացեալք. յելանելն իւր Երուսա-
ղէմ, զորս միամտեցոյց պատմութեամբ
եղելոցն իրաց։

Նա գտանեմք իսկ՝ զի յետ համբարձ-
մանն Քրիստոսի՝ ի նմին իսկ ամի կայ-
սերական հրամանաւ յորդեցաւ քրիս-
տանէութիւն՝ ի Հռովմ անդր, որպէս
ունիմք ստուգիւ՝ ի դիւանացն Աբգարու
Հայոց թագաւորի, որ անդրանիկն է
յամենայն կռապաշտ թագաւորացն՝ ի
Քրիստոս, և յառաջ քան զիսաչելուին
գրաւոր նամակախօսութեամբ խոստովա-
նող Քրիստոսի, և ընդունող առ՝ ի նմա-
նէ զպատասխանին։ Օ՛ր ըստ ճշմարտու-
թեան բերէ Անանիա Խորենացի պատմա-
գան, առեալ՝ ի Ղերուբնեայ դիւանա-
գրէն Աբգարու։ Քանզի ասէ անդանօր

թէ յետ լուսաւորելոյն Աբգարու քրիս-
տոնէական հաւատով և մկրտութեամբն
'ի սրբոյն Թադէոսէ առաքելոյ յամի
ծննդեան Տեառն 33 . իսկ և իսկ կան-
խեաց գրեաց առ կայսրն Տիբերիոս .
զորոյ օրինական ունիմք ամբողջ գրեալ
առ Խորենացւոյն (բ . 30 ։) Արդ 'ի նա-
մակին՝ որ առ Տիբերիոս , ցուցեալ Աբ-
գար զաբանչելագործութիւն Քրիստոսի ,
զնաչն , զյարութիւնն և զայլսն . գրէ
և յորդորէ զնա հաւատալ 'ի Քրիստոս՝
ասելով . " Եւ արդ՝ այսուհետև գիտէ
տէրութիւնդ քո ... գրել ընդ ամենայն
տիեզերս , զի երկրպագեսցեն Քրիստոսի
իբրև ճշմարիտ Աստուծոյ " ։ Առ այս պա-
տասխանի արարեալ կայսրն Տիբերիոս՝
ցուցանէ թէ և ինքն իսկ յառաջ քան
զգրելն Աբգարու կամեցեալ էր զնոյն ,
և 'ի տհաճութենէ սինկղիտոսին արգե-
լեալ . ըստ որում հրամանաւ Թադաւո-
րին միայն , և առանց քննութեան սինկ-
զիտոսին չէր սրբորութի՞ Հռովմայեցւոց
Աստուած հաստատել ։ Եւ ապա ասէ .
" Այլ մեք տուաք հրաման ամենայն

ուրեք , որում և հաճոյ թուեցի Յի-
սուս , ընկալցի զնա ընդ ասուածս . և
մահ այնոցիկ սպառնացեալ , որ չարա-
խօս կայցեն զքրիստոնէից » : Պատ որոյ
յայտնի երևի , թէ յառաջագոյն ևս
յարգեալ էր 'ի Հռովմ քրիստոնէութի ,
այն ինչ տակաւին 'ի կողմանս Պաղեստի-
նացւոց էր սրբազանն Պետրոս : Ուր ժա-
մանակն՝ յորում դնեն Հռովմայեցիք
հաստատել Պետրոսի զաթոռ իւր 'ի Հռ-
ռովմ , ընդդէմ ելանէ ստուգագիր պատ-
մութեան պրակացն առաքելոց :

Արդ՝ առ 'ի հաւանեցուցանել զգնալն
Պետրոսի 'ի Հռովմ ասեն ոմանք 'ի նո-
ցանէ , որպէս և Փերոն ոմն իւրեանց
պատմագիր թէ ըստ պիտանուն գործոց
և իրաց երթևեկս առնէր 'ի Հռովմայ
'ի Պաղեստին . այլ տակայն ըստ ախուր-
ժանաց անհիմն զրոյց է : Օ՛ի ոչ միայն
երևոյթ առաքելական բանիցն չտայ մեզ
հաւանական համարել զայդ կարծիս ,
այլ և ըստ սովորութեան վիճակի այնր
ժամանակի դժուարուի մեծ գուշակի :
Քանզի նաւարկութիւն առ այնու ժա-

ժամանակօք չէր այնքան ընտելագոյն , զի յորում ժամանակի և դէպ լինէր , համարձակ նաւեցեն . զոր ստուգէ մեզ նաւարկութիւնն սրբոյն Պօղոսի ։ (Գործ . ԻԷ ։) Ուր և յայտնի աւանդի , թէ զայնու ժամանակաւ զողջոյն միջոցս ձմերայնւոյն 'ի նաւահանգիստն ձմերէին ։ Եւ զի յատկացեալ էր նմա քարոզութիւն 'ի Թլփատութեան . և ընդ Յակոբու և Յովհաննու՝ որպէս և գրէ սուրբն Պօղոս . սիւնք էին նոքա նորոց քրիստոնէական կարգացն կառավարուէ , հարկ 'ի վերայ կայր զբաղում ժամանակս ամաց 'ի կողմանս Պաղեստինու ունիլ ընդդեգերումն , որպէս և է իսկ ստուգութեամբ ։

Եւ զսոյն զայս նա և Հռովմայեցւոցն դրութիւն հաստատէ . քանզի համարին նոքա , թէ յետ քարոզելոյ սրբոյն Պետրոսի 'ի Թլփատութիւն ըստ որոշման Հոգւոյն , և յետ տարածելոյ զհաստատուն ծաւալումն քրիստոնէական հպատակութեան և անմեղկութեան 'ի հաւատացեալսն՝ որք 'ի Հրէից սիրեալ էին 'ի Պոնտոս ։

'ի Գաղատիա, 'ի Կապադովկիա, Ասիա և 'ի Բիւթանիա. և յետ վարելոյ իսկ զեօթնամեայ իշխանութիւն որքեպիսկոպոսութեանն իւրոյ Անտիոք, ուր եկն զկնի ժողովոյ առաքելոցն, ըստ գրութեան որբոյն Պողոսի առ Գաղատացիսն, (բ. 11.) ապա գնացեալ ասեն 'ի Հռովմ, և եդեալ անդր զաթոռ իւր վարեալ զիշխանութիւն պապութեան զամս 25, ըստ Հերոնիմոսի. կամ զամս 24, ամիսս 5, և աւուրս 10, ըստ այլոց. կամ զամս 22, ըստ ոմանց։ Բայց սակայն առանց կողմնապահութեան կրից յառաքելական բանից կարդ հայեցեալ՝ գըտանեմք զամենեսին անհիմն բարբառել. և կամ պարզամիտ հաւանութեամբ ըստ ընթերցման զնախկին գրութիւն յետոյ պատմաբանին՝ խօսեցեալ. զի չկայր 'ի միջի առլիթ զառաքելական բանից ժամանակագրութի ճշդիւ 'ի քննութի առնուլ 'ի մատնաւորի որպէս և յառաջն ասացաք։ Վասն զի եթէ ըստ ճիշդ ժամանակագրութեն վարեսցուք որք յառաքելական բանից դուշակին ստուգիւ,

ոչ որքան ասենն , այլ՝ մի կամ երկու՝ կամ առաւել ևս՝ երեք ամ հաղիւ գըտանեմք զանչիշատակութիւն լինելոյ սրբազանին Պետրոսի 'ի կողմանս Պաղեստինու և Անտիոքայ . և զիարդ տալ հնար լցէ նմա զայնքան ժամանակս 'ի Հռովմ ։

Իսկ եթէ ասիցեն . թէպէտ ոչ որքան գրին , սակայն դէթ սակաւ ինչ ամօք կացեալ լցէ պապ 'ի Հռովմ . և այն իսկ բաւական է ։ Այլ սակայն ծանիցեն հաւատսի զի սոյն այս իսկ է , որ զդրութիւն նոցա մուրճ 'ի ձեռին տապալ կործանէ ։ Օն եթէ բաղում ամօք յետոյ քան զոր ասենն , գնացեալ լցէ նա 'ի Հռովմ , յայտ է զի յառաջ քան զնա քարոզեալ էր անդ քրիստոնէութիւն , և կայր հիմնեալ եկեղեցի . և ինքն Պետրոս 'ի յայլմէ եդեալ հիմանն վերայ եղև շինող և յաջորդ նախկին հիմնադրին ։ Եւ զիարդ ոչ ունայնասցին այսուիկ՝ մարդ կօրէն խորհրդով պարծանքն Հռովմայեցւոց . զի սրով համօրէն իշխեալ ամենայն եկեղեցեացն քրիստոնէից դառոյացեալ զամենայն ջանս ջանան , և

'ի Յեսին ճիգն վաստակեալ քրտնուն, նոքին և զցաճուցեալ՝ սորա ընդ հոսկատակն փքացման իւրեանց բերին, որպէս և վճիռն է տէրունական։

Ասեցէ ոք ինձ առ այս ամ յանդուգն դու և անդր քան զչափ անձին վերասլաց, չզանգիտէս ընդդէմ հաստատակ կարծեաց դիմախօսել. ամենեքին՝ որք 'ի սկզբանէ և այսր գրոյ աւանդեն՝ արք մեծարոյք, նրբինք և դերիմաստ, ասեցին, և առ յետնագոյն ծնունդդ յետին ժամանակի՝ ունչուք ծանծաղութիւնդ միայն մնաց ճշմարտել։

Որում ասամ պատասխանի. Այս գիտեմ զանձինս նուաստութիւն, ճանաչեմ զինքս բոլորովին յետնեալ 'ի շնորհաց, սակայն չունիմ յանդգնութիւն յայդ կարծիս, որ զառաքելական բանիցն զսեպութիւն բուռնհար եղէ բերել 'ի յայտնութիւն։ Այլ թէ ոչ՝ գիտեմ զամենեսին զնոսա վեհս և նրբիմաց. ունիմ և զբաղումն 'ի նոցանէ սուրբս և ուսնելիս ընդունիլ և ընդունիմ խոկ. սակայն առաքելական բանիցն ճշմարտու-

թեան երևոյթ տայ ինձ համարիլ զնոսա յայսմ մասին, թէ ճիշդ՝ խուզարկու-թեամբ չհոգացան զժամանակաւորութիւն, և ոչ յայս մտաց տեսութիւն պարտաւեցին. զի չկայր յառաջին ժամանակս վասն Հռովմայ գահին զոյց հակառակութիւն. և ոչ իսկ ինքեանք Հռովմայեցւոց նախկին գահակալք յայս ընդհանուր իշխանութիւն զանձինս ձկտեցուցանէին. Ասա՝ թէ և միամիտ հաւանութեամբ ըստ գրութեան յեանոցն զնոյն ասէին և գրէին. վասն որոյ 'ի լինել զօրաւոր և սրատաճառաց՝ զօրն ինչ ապրեօք տիարապոյնք, յումմէ և ասացին։

Բանդն թէպէտև ընդաբոյս է նոցա գահասիրութիւն, և եռանդն ընդ ձեռամբ բերելոյ 'ի պարծանս իւրեանց ըստ պարծելիս, ունի զամենայն իւր 'ի կողմանս յայնոսիկ՝ ըստ հնագոյն վիպացն ստուգագրելոց. սակայն այս փոյթ իշխանասիրութեան յետոյ ուրեմն տիրեաց յեկեղեցի, և վերջ 'ի վայր եղեալ դատարկարդութիւնն։ Եւ այս քարեխանդաւ սենչ գահասիրութեան յընտանի վա-

ռատիրութենէ յղացեալ արտաքոյ կա-
նոնաց՝ յամն 858. ծնունդս վիժել ակը-
սաւ յեկեղեցին Կոստանդինուպօլսի. ա-
ռիթ առեալ ինքեան զհակառակուն
Պոդիոսի և Իգնատիոսի. և բազմաց
ինքնուց պատճառ եղև 'ի դահաւէրդ ա-
ռողութենէ Նիկողայոս պապին. որ ըստ
ամբարտաւանութեան մտաց իւրոց կա-
մելով ընդարձակել զիշխանութիւն իւր
և 'ի վերայ արևելեան եկեղեցւոյն և նո-
վաւ 'ի վերայ բոլոր քրիստոնէից կամա-
կոր ձեռնարկութեամբ յաստուածային
տառիցն 'ի նոյն նկրտեցաւ, և ելից բաղ-
մալրդով աղմկաւ զտունն Յունաց. զ-
որ յետ ժամանակաց բազմաց և մեք իսկ
առաք զդառնագոյն ճաշակ յաւուրս տէ-
րութեանն Վլադիմիրոյ։ Այլ նաներացաւ և
ընդվայր եղև խրոխտումն հռովմէական,
և միայն զպառակտումն միութեան եկե-
ղեցւոյ պտղաբերեաց. թէ և տակաւին
'ի նոյն ջանս կայ անմեղկելի բանն Հռով-
մայ։ Օ՛ի սկսեալ յամաց Տեառն 865,
մինչև ցամն 1439, յաղագս սոյն և այլոց
իրի բազում ժողովք դումարեցան յա-

բեռելս և Յարեմուս . և սկսան ասել
և անել նեռս նզովից և բանադրանաց
զիրերօք տեղալ չարաչար որոտմամբ ։
Այլ Եղիա Մինեադիս եպիսկոպոս Յու-
նաց՝ նեռք Նիկողայոս պապին հին Հռով-
մայ իբրև նեռք տղայոց համարէին , ա-
սէ , յօտարոտի դատարանէ արկեալք ։
Եւ ինքն իսկ Նիկողայոս , որ առաջինն
եղև բորբոքիչ սոյն այսմ բաղմատա-
չոր բոցոյ յեկեղեցին , 'ի ներքոյ ժո-
ղովական նզովից մեռեալ 'ի 867 ամին ,
նոյեմ · 13 , զախան աւագասիրութեան
եթող յիւր յաջորդս . որք հետզհետէ
չարաչար բաժանումն մուծին յեկեղեցի .
և զայլոց ևս բաղմաց խաղաղիկ անդորո-
ութիւն վեր 'ի վայր տապալեցին , և
տակաւին 'ի նոյնս կամակորին ։

Յառաջին ամն լուսաւորութեան մը-
կրտութեամբ սուրբ աւազանին ազգին
Բուլղարաց 'ի ձեռն Ջանից , Յունաց ,
անդէն առ նմին քարոզս և եպիսկոպոսս
առաքեալ առ նոսա պապն Նիկողայոս ,
պարտել սկսաւ զմատակարարութիւնն
խորհրդոյ Յունաց եկեղեցւոյն , և նոր

ծանել իւղով , քարոզելով իսկ և իսկ ապախտ և անվուեր զյուսական հաւատալին , սակայն չկարաց հատանել իւրումն բաղձանաց դարձուցանելով զնոսա 'ի Հռովմէական սիթոռոյ հնազանդութիւն , և կամ արմատացուցանել առ նորագործ անդատանս նոցա զսերմանս իւրոյ վարդապետութեան . զի Տէր ամբարտաւանից հակառակ կայ ։

Յաջորդ զինքեանս քարոզելով որբազանին Պետրոսի՝ ոչ առաքելաբար , այլ ասուածօրէն ձեռն արկին 'ի սէս սէս նորաձևութիւնս . և ինքնօրէն փքացմամբ ուշ 'ի կուրծս արարին ամենայն ջանիւք ինքեանց համոզանել , զորս 'ի նախնի աւանդութիւնս անխոտոր գտային ։ Օ՛ռոյն զայս անաչառ խոստովանի մեծ ասուածաբանն Պատղիացւոց՝ Տէր Սիմէօն քահանայ հռովմէական եկեղեցւոյ . որ ամենայն լեզուաց և գրոց աբեղեան քրիստոնէից հմուտն էր և նեբվուռ , և խմաստութեամբ հռչակեալ ընդ ամենայն արևմուտս բազմապատիկ գրոցն արտաձաւաւ . ասա զերկու գիրս

եւ գրեալ վասն կրօնից արեւելականաց, բազում ինչ ասէ ոնուչտու. եւ ապա սատակագոյնս կշռամբէ զեւրոպէական վարդապետս, որք շրջին յարեւելս և անիմաստ բարուքն իւրեանց բորբոքեն զհուր թշնամութեան 'ի մէջ եկեղեցւոյ, ունելով բանին օրինակ զայս.

" Փոխանակ ցուցանելոյ (ասէ) թէ ա-
" րեւելեան և արեւմտեան եկեղեցիքն զմի-
" և զնոյն հաւատս ունին, նոքին իսկ ալ-
" գէտքն և անիմաստք, և նախանձոտք
" միայն 'ի զուր բամբասել ջանան զնո-
" սա, և սուտութեամբ չարախօսել զնո-
" ցանէ, թէ հերձուածողքն. ուր զի և
" ոչ զատուեր հերձուածողութեան ու-
" նին նոքա: Եւ ապա զոր ինչ տեսա-
" նեն 'ի մէջ արեւելեան եկեղեցեաց
" զանազան 'ի մերոց սովորութեանց,
" առանց քննութեան զաղաղակ բառնան,
" թէ հերձիք է այս. որպէս և յայտնի
" երևի 'ի գիրս այնոցիկ, որք գրեցին
" ընդդէմ արեւելականացն: Եւ ոչ գի-
" տեն տգէտքն այնոքիկ և դատարկքն թէ
" արեւելեան եկեղեցիքն զայն ամենայն

“ աւանդութիւնն ունին յառաջին ժա-
“ մանակաց անտի սրբոց հայրապետացն
“ Թադեոսի , Կիւրղի , Յովհաննու Ա-
“ կեբերանին , և այլոց ևս առաջին սուրբ
“ հայրապետացն : Եւ կարծեն տգիտու-
“ թեամբ թէ արևելեան եկեղեցիք յա-
“ ռաջին աւանդութենց զբաղում բանս
“ փոխեալ իցեն . մինչ ոչ արևելա-
“ կանքն , այլ մեք արևմտականքս փո-
“ փոխեալ եմք , և զնորաձև վարդապե-
“ տութիւնս մուծեալ , և այլն ” :

Այս օրինակ խօսի և Ղուկաս ներհուն ստուգաբան գլխաւոր պահապանն գրքատան պապին 'ի գիրսն իւր . որ տպեցաւ հրամանաւ Ֆրանչիսկոս Զարպերի-նոս կարդինալին , ասելով .

“ Պատճառ ողբալի բաժանման արև-
“ ելեան և արևմտեան եկեղեցեացն մեր
“ Եւրոպէական վարդապետքն են . քան-
“ զի ոչ ինչ հոգան բնաւին վասն ճշմար-
“ տութեան և սիրոյ , զոր ունիլ պարտ-
“ է առ եղբարս . այլ միայն յաղթել
“ խնդրեն այլոց , և հրամայել նոցա զոր
“ ինչ ախորժեն : Եւ այսպէս բորբոքել

“ սատանայական ցանկութեամբն հակա-
“ ճառել և յաղթել այլոց , առաւել
“ վառեն 'ի մէջ եկեղեցւոյ զհուր բա-
“ ժանման , և այլն „ ։

Այսպէս խօսին և այսպէս ուսուցա-
նեն և այլ բազում արք բարեխորհուրդք։
սակայն մեծագոյն մասն՝ որք զհետ տեն-
չանաց ինքնակալին իւրեանց՝ (զի զայս
անուն դնէ պապին ուխտն գաղղիական
'ի միտս հեգնութեան) զսկատեալ են ,
Ջանան և Ջանան զամենեսին 'ի ներքոյ
իշխանութեան Հռովմայ արկանել , հիմն
ունելով ընդհանուր այնմ իշխանութե-
զորբազանն Պետրոս ։ Որ թէ և գնացեալ
համարեցի յառաքելութիւն Հռովմայ ,
ոչ ինչ զօրէ խրոխտումն հռովմէական ,
և տառք աստուածայինք յայնպիսի միտս
չսեղմեն զտեսութիւն քանին , զոր ա-
խորժեն Հռովմայեցիք ։ սակայն առա-
ջել ևս նանրանայ , յորժամ ասուցի ,
թէ զրբազանն Պետրոս իբրու յատուկ
առաքեալ չէ գնացեալ 'ի Հռովմ , որ-
պէս և ճշգրտիւ ցուցանէ Մեղ Սատեանն
աստուածային ։

Դէպ եղև ինձ երբեմն 'ի հանդիպի ուրուք տեսանել զոմն սարկաւագ հռոմէական, որ առանց հարցանելոյ ուրուք և առանց առթի, միայն զոհնս գլխաւոր առաքելոցն ունելով պատեհաւորիչ խօսելոյ, ասաց ինքնին, թէ Ա՛նք և ես ոչ սահմանք զսուրբն Պետրոս կենդանւոյն գնացեալ 'ի Հռոմ։ Այլ այն ասուգի, թէ պարծենկոտութեան Հռոմայ տանի անդ զսուրբն Պետրոս, որպէս զի պատճառս գտցէ ընդ վայր խրոխտալ, այլ զնորա խրոխտ և ուխտն դաղղիական ընդդատնէ, և զերևակայական ընդհանրութիւն իշխանութեանն նորա 'ի դերևս հանէ բաղում հաստատութեամբ, զորմէ երկար լինի գրել։

Այլ դու մի՛ զարմանար ընդ այն, զի մեծամտութեան հռոմէական զարբազանն Պետրոս, երևակայական դատմամբ պատկացուցանեն 'ի Հռոմ, զի զընդհանրականութիւն իշխանութեանն իւրոյ գլխաւորութեամբ նորա հաստատեցէ անհիմն բանիւք, այլև ընդ այն զարմացիր, զի ախտաժելոյ բան զամենեսին փարթամա-

գոյն հանդիսանալ, զայնպիսի ինչ իրա տանի զետեղէ անդանօր, որում ոչ զբ 'ի զգաստից հաւատ ընծայէ. այլ մանաւանդ և ընդ ստոյգն իսկ տարակուսի։

Ընթերցիր "զՆոր Ուղեկցութիւն Հրեշտակային" անուանեալ գրքոյկն, որ վկայութեամբ Հռովմէականացն տպագրեալ է 'ի Հռովմ յամին 1725. և տեսցես թէ զՊրպիսի իրս տանի հաւաքէ յեկեղեցիս Հռովմայ։ Ընդ այլ բազմաթիւ մասանցն ասէ լինել և 'ի սուրբ Մարիամ Մաքդալն զգօտի և զանկողին Արքուհւոյ կուսին Մարիամու, զծիրանին Քրիստոսի, և զօրօրոցն մանկութեան նորա ընդ խանձարրոյն։ Ի Յովհաննէս Լատերանին ասէ լինել յեռայլեաց և զքօղն Աստուածածնին զվարշամակն Քրիստոսի և զՔուրն և զարիւնն, որք բղխեցին 'ի կողէն Յիսուսի յորժամ եբաց զինուորն զեղարդեամբ, մինչ էին 'ի խաչին։ Յեկեղեցին սրբոյն Պետրոսի ընդ այլ մասանցն դնէ լինել և 'ի խոտոց մարոյն ուր 'ի ծննդեանն եդաւ Քրիստոս։ Յեկեղեցին սրբոյն Մարիամու դնէ

զՀերան Աստուածածնին և զքոյն զմտուրն բոլոր, և այլն։ Յեկեղեցին սրբոյն Ռոքոսի ասէ լինել մասն 'ի վիմէն ուր հանգեաւ կոյսն Մարիամ յերթալն 'ի լեռնակողմն. և մասն 'ի տանէ Եղիսաբեթի. հերքն և կաթն սուրբ Աստուածածնին։ Յեկեղեցին երկոտասան սուրբ առաքելոցն դնէ զարիւն Յակոբոս մեծի՝ տակաւին չուռուցեալ, և այլն։ Ի մատուռն որ կոչի Սրբուհի Սրբոց՝ ասէ դոլ մասն յիսկական մարմնոյն Քրիստոսի. և հաց մի յընթրեաց սեղանոյ ընդ երկոտասան վշտանաց. և հերքն Յովհաննու աւետարանչին, տախտակն՝ յորոյ վերայ նստեալ լուաց զոտս աշակերտաց՝ Տէրն մեր, և այլն. զոտս թուել ձանձրոյթ է լսելեաց։

Ընդ 'ի վիտ առ ուշիմութեամբ, զի եթէ զայսոսիկ, յորոց բազումք յայսոնապէս են անկարելիք, համարձակ 'ի գիր արձանացուցանեն լինել 'ի Հռոմի, զի պարծանք իւրեանց առաւելցի. և հաստոյթքն յեկեղեց անդր ուխտաւորաց առատ հաւաքեացին, զինչ արգելու և զարբաղանն Պետրոս իսկ ածել 'ի Հռոմի,

տեսեալ՝ թէ կարկատուն և քմական մեկ-
նութեամբ աստուածային գրոց , իշխա-
նութիւն իւրեանց ընդհանրանայ : Այլ
տե՛ս ինձ զկատարածն ջանից նոցա . զի
որքան յերկս մխեցան ընդարձակել զիշ-
խանութիւն իւրեանց յայլ եկեղեցիս
քրիստոնէից , նոյնքանեօք և սա յիւրեանց
սեպհական ժողովրդոցն զրկեալ մնացին :
Եւ որքան ջանացին արտաքոյ իւրեանց
սահմանի բաղուկս տարածել . 'ի բնիկ
սահմանի անդր կծկեալ կարճեցան ,
յիւրեանցն գաւթէ զհօտս իւրեանց
շրուանելով :

Յիւրեանս զայս ինչ գործեցին . իսկ
յայլս զի՞նչ արդեօք . — զբաղում մնասս
և զկործանմունս . խոստացան առերևոյթ
յոյս օգնականութեան անմեղաց պաշա-
րելոց 'ի թշնամեաց , որպէս զի այնու
կարասցեն հասանիլ իւրեանց փափաք-
նաց , զամենայն եկեղեցիս քրիստոնեայ
ազգաց ընդ իշխանութեամբն արկեալ
Հռովմայ . և կործանման պատճառք ե-
ղեն բազում թագաւորութեանց . որ-
պէս վկայեն մեզ նախնեացն պատմութիւնք։

Այլ նոքա մաշեցան 'ի խորհուրդս իւրեանց զոր խորհեցան , սակայն և մաշեցին զքաղաքամ անմեղս . որոց վնասուց պարտական են տալ զհամար յահաւորն ատենին ։

Իսկ մեք վերջացուցանել զբանս կամելով՝ զայն դնեմք կնիք բանիս , զոր ասէ ուխտն գաղղիական եկեղեցւոյն .

" Եթէ ստորադրեսցուք զեկեղեցին Քրիստոսի 'ի ներքոյ պապին , նոյն է . եթէ իջուսցուք զնա վայրագոյն լինել քան զԱինակոկայն Հրէից . որովհետև նա գերի է միայն Աստուծոյ . և զեկեղեցին՝ որ է՝ հարսն Քրիստոսի , գերի առնել կամին վարդապետքն Հռովմայ , մարդոյ միոյ՝ այսինքն է պապին , որ մեղանչական է և մահկանացու " ։